[illegible]

# «ԿԱՐԻՆ» ԱՆՍԱՄԲԼԸ ՄԵԿՆԵՑ ՍԻՐԻԱ

**Պատմական այս անունը կրող ժողովրդական գործիքների նվագախմբի գոյության մասին գիտեի տարբեր ազդագրերից եւ փառատոներից, որոնք հատկապես վերջին շրջանում համախակի էին հայտնվում այսպայնտեղ՝ ծանուցելով հետաքրքիր հայտագրերով համերգների մասին: Մայրաքաղաքում, սակայն, առիթ չէր եղել տեսնելու, ինչպես հետո պարզվեց, արդեն 3 ամյա կենսագրություն ունեցող գեղարվեստական այս կոլեկտիվի ունկն ելույթ: Դա տեղի ունեցավ նախորդ ամսվա վերջերին, երբ Գյումրիում գտնվելուս օրերին գնացի հիշատակ խմբի համերգին:**



[illegible]

ԼԵՎՈՆ ԼԱՃԻԿՅԱՆ

## Բուլղարահայ երգչախմբի հոբելյանը

**Երգչախմբային ընկերության տան դահլիճում օրերս կայացավ տոնական համերգ՝ նվիրված բիվ 5 ճեմարանի տան պատերազմի եւ աշխատանքի բուլղարահայ վետերանների երգչախմբի 10-ամյա հոբելյանին: Հոբելյարներին ողջունեց Հայաստանի երգչախմբային ընկերության նախագահ՝ պրոֆեսոր Էմմա Ծատուրյանը: Նա նշեց, որ բազմախմասալ կոլեկտիվի երգեցողությունը երբեք անտարբեր չի թողել հանդիսատեսին, ապա ներկայացրեց երգչախմբի հիմնադրին՝ խմբավար Անդրանիկ Թորոսյանին:**



[illegible]

ՆԱՏԱԼՅԱ ՍԱՄԱՐՅԱՆ

## Եւս մի քանի հաճույք՝ արվեստանոց

[illegible]

Ռ... 1994-ից արվեստանոցը Հայաստանում արվեստագետների համար կդառնա ամենապատեհ հաճույք, որտեղ արդեն մեկը եւսմին հարաբերությունն էլ չի փոխի:

ՌՈՒԶԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

## Կրավչուկը երաշխիքներ է պահանջում

Ուկրաինայի նախագահ Լեոնիդ Կրավչուկը «Ֆիգարո» թերթին տված հարցազրույցում հայտարարեց. «Ուկրաինան պետք է բաժնի դեպի միջուկազերծ կարգավիճակ, այլ ուղի մեր երկիրը չունի: Ցավոք, խորհրդարանը չվավերացրեց ռազմավարական հարձակողական սպառազինությունների սահմանող պայմանագիրը»: Նրա խոսքերով, դա պայմանավորված է մասնավորապես այն բանով, որ մյուս միջուկային տերությունները չեն փորձել ըմբռնել երկրի հատուկ իրավիճակը եւ խորհրդարանի մտահոգությունը, որը «վախենում է Ռուսաստանի ազգայնական ուժերի տարածքային պահանջներից»: Կրավչուկն արտահայտվեց Ուկրաինային անվտանգության երաշխիքներ տրամադրելու օգտին, մասնավորապես բոլոր միջուկային տերությունների կողմից: Մերժելով ՆԱՏՕ-ին անդամակցելու կամ ռազմական համաձայնագիր ստորագրելու մտադրությունները, նա առաջարկեց, որ միջուկային տերությունները պարտավորություններ ստանձնեն չհարձակվել Ուկրաինայի վրա, երաշխավորել նրա տարածքային ամբողջականությունը: Անդրադառնալով Ռուսաստանի հետ Ուկրաինայի հարաբերություններին, Կրավչուկը խոստովանեց, որ Ռուսաստանը շատ ունի նաեւ իր սահմաններից դուրս, որտեղ ապրում են 25 միլիոն ռուսներ: Նախագահն ասաց, որ «ռուսների հետ հարաբերությունների խնդիրն այն մեթոդներն են, որ նրանք օգտագործում են իրենց շահերի պաշտպանության համար»: Ուկրաինայի նախագահը բացառեց այն բանի հնարավորությունը, թե Ղրիմում իրավիճակը կզարգանա աբխազական սցենարով: Կրավչուկը դա բացատրեց երկու պատճառով. մեծական ռուս-ուկրաինական երկխոսությամբ եւ տնտեսական ու սոցիալական ոլորտներում Ղրիմի գրեթե լիակատար ինքնուրույնությամբ:

ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՌ-ՏԱՍՍ

## Ռուս-ֆրանսիական սեմինար Մոսկվայում

Նոյեմբերի 29-ին Մոսկվայում աշխատանքն սկսեց ռուս-ֆրանսիական սեմինարը, որի թեմաներն են սպառողների իրավունքների պաշտպանությունը եւ ժողսպառման ապրանքների շուկայում մրցակցության զարգացումը: Դրա կազմակերպիչներն են Ռուսաստանի հակամենաշնորհային քաղաքականության ու տնտեսական նոր կառույցների պաշտպանության պետական կոմիտեն եւ Ֆրանսիայի Էկոնոմիկայի ու ֆինանսների նախարարության մրցակցության, սպառողական քաղաքականության եւ չարաշահումների դեմ պայքարի գլխավոր տնօրինությունը: Սեմինարն անցկացվում է նոյեմբերի կեսերին Ռուսաստանի եւ Ֆրանսիայի կնքած սպառողների իրավունքների պաշտպանության պայմանագրի կատարման ծրագրի շրջանակներում: Դրա աշխատանքին մասնակցում են Ռուսաստանի հիշյալ պետական կոմիտեի եւ դրա տարածքային վարչությունների ղեկավար աշխատողներ, ինչպես նաեւ ՆԳՆ դատախազության ու դատարանի, պետստանդարտության, սանիտարահամաճարակաբանական հսկողության պետական կոմիտեի ներկայացուցիչներ: Սեմինարում քննարկվում են երկու երկրներում սպառողների իրավապաշտպանության առանձնահատկությունները, նրանց անվտանգության եւ առողջության պաշտպանության գործում դատական մարմինների դերը, ապրանքների մրցակցության գոյացման եւ ազատ տեղաշարժման զարգացման պայմանները, ի շահ սպառողների ձեռնարկչական գործունեության պետական կարգավորումը: Սեմինարը կշարունակվի մինչեւ դեկտեմբերի 4-ը: ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԲԻԶՆԵՍ-ՏԱՍՍ

## 16 սղանություն րոպեում

Ռուսաստանի ներքին գործերի նախարարության խոսնակը մամուլի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ ասել է, որ ծանր հանցագործությունների ճանակը երկրում հասել է կրիտիկական կետի: Մասնավորապես սղանությունների հարցով նա ասել է, որ միջինը Ռուսաստանում մեկ րոպեում կատարվում է 16 սղանություն: Սղանությունների հիմնական զոհ են դառնում, ըստ ՆԳՆ-ի տվյալների, բանկիրներն ու ձեռներեց մարդիկ:

digitised by A.R.A.R.@

